

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՆ ԸՍՏ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ

«Աշխարհիս պալատներուն հաստատութեան
հիմն ու խարխիս շինական ժողովրդոց խորհիւն է»:
Մ.Խ.

Մկրտիչ Խրիմյանը հայարնի է որպէս հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակա-
կան-քաղաքական եւ կրօնական խոշոր գործիչ, առաքյալ, մեծ հայ, հրեշտակ հայոց, ներ-
հուն մարավորական եւ բնաշխարհիկ գրող, Ամենայն Հայոց կաթողիկոս, որին մեծարել են
«Հայոց Հայրիկ» պատվանվամբ, որպէս ճշմարտության անդուլ որոնողի, գաղափարի եւ
ազատության ջահակրի¹:

Սույն հոդվածը նպատակ ունի նշված եւ չնշված փառանքներին ու մեծարանքներին
ավելացնել Մ. Խրիմյանը բանասաց, բանահավաք, ազգագրագէտ²: Առ այսօր այս փե-
սանկյունից Մ. Խրիմյանը չի արժանացել ուշադրության՝ դուրս մնալով ազգագրագէտների
փեսադաշտից³:

ԺԹ դարի 60-80-ական թթ. արեւելահայության մեջ նշանավորվեց «ժողովրդական
գրողների» մի ողջ սերնդի մուտքով հայ գրականության: Ասպարեզ եկած գյուղագիրնե-
րը, գյուղագրական գրականությունը, ազգագրական գյուղավեպը, ազգագրական պարմ-
վածքները փաստամայակների ընթացքում արտացոլում են հայ գյուղի կենցաղային իրակա-
նությունը: «Կենցաղագրությունը... ստանում է նաեւ ազգագրական բնույթ եւ, կարեւորն է,
ինչ-որ չափով փոխարինում է բանահավաքական աշխատանքին»⁴: Արեւմտահայ իրա-
կանության մեջ այն հանդես է գալիս «գավառական գրականություն» անունով, որն իբրեւ
գաղափարական գրական հոսանք, առաջացավ նույն դարի 60-80-ական թթ.: Մ. Խրիմյանի
«Պապիկ եւ Թոռնիկ»... աշխատաքնի հանդես գալը համընկնում էր «գավառական գրակա-
նության» զարգացման նոր փուլին, որ նշանակում էր անցում դեպի գույր գեղարվեստական
գրականություն: Դա գեղարվեստական գրականության անցման փուլի վերջին, ամփոփող
արարահայությունն է»⁵:

1 Տե՛ս Ա.Մաղոյան, Ն.Պետրոսյան, Գաղափարի եւ ազատության ջահակիրը. Խրիմյան Հայրիկ, Երևեր,
Եր., 1992, էջ 4-5:

2 Ելնելով հոդվածի սահմանափակ հնարավորությունից, Մ. Խրիմյանի աշխատանքներում առկա ազգագրական
մի շարք ելմանահարցերից՝ կանգ կառնենք միայն փնտրական կենցաղին՝ ելակեր ունենալով հեղինակի «դաշտի
մշակ», «մշակության մաճկալ» ինքնատրականները:

3 Ուշագրավ է Վազգեն Պալճյանի (հետագայում Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոս) «Խրիմյան Հայրիկ
որպէս դաստիարակ» (Պուրբէշ, 1943), աշխատանքը, որը Մ. Խրիմյանի մանկավարժական հայացքների ու փորձի
ընդհանրացումն է:

4 Գ.Ղանիկեյան, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում (1860-1890), Եր., 1973, էջ 349:

5 Տե՛ս Ն.Պետրոսյան, Գեղամ Տեր-Կարապետյան, Եր., 1983, էջ 123-124:

Արևմտահայ գրականության մեջ «գավառական գրականությունը» հանդես է գալիս «բնաշխարհիկ գրականություն» (Ն. Օշական), «ցեղադրոշմ գրականություն» (Ն. Ճանաչյան) և այլ անուններով, որն իր մեջ ներառում է «բանահյուսական նյութեր» և «ազգագրական նկարագրություններ»։ Ա.Նարությունյանի բնորոշմամբ՝ «Գավառական գրականությունը կոտորակ մը չէ ալ, ամբողջությունն իսկ է»։ Այսինքն, «Գավառական գրականությունը արևմտահայ գրականության առանձին արտահայտությունը չէ, այլ բուն գրականությունն է»⁶։

1992 թ. Ն. Պետրոսյանի և Ա. Մադոյանի ջանքերով լույս տեսավ Մ. Խրիմյանի երկերի ժողովածուն⁷, որի մասին կազմողները գրել են. «Ներկա հատորը երկարամյա լուծյալներից հետո առաջին փորձն է հայրենի ընթերցողին ներկայացնելու մեծ նվիրյալի գրական ժառանգությունը»⁸։

Պապիկ և Թոռնիկ վիպակի սկզբում Խ.Նայրիկը գրում է, որ իրեն էր վիճակված «...Կիլիկիական քան յիշարակաց դայիր» լինելը և այն նվիրում է «...մեծամուն Ազգապոհմին իբրև անմոռանալի մի հիշարակ», որպես «Նայրիկին պսակ», «իբրև ծաղկեփունջ»՝ Նով-հաննեսի «գերեզմանին վրայ»⁹։

Իր «Առ շինական ժողովուրդս հայոց» ուղերձում, Մ. Խրիմյանը գրում է. «Ահա քեզ համար հոգացի և պարբերաբար «Պապիկ և Թոռնիկ»... որ դու քո հայրենապուր հողն ու դաշտ սիրես և երբէք չի բաժանուիս... Պապիկ իր Թոռնիկ խաչով, Անդառանով պսակելն յեպոյ, կը քանդէ զինքն ի դաշտ և կ'ասէ՝ ...պիտի պսակեմ զքեզ հողին ու մաճին, գութանին ու հողագործութեան հետ... կը դնեմ քո գլուխ ցորենաբոյսի ցողուններէն ինչպէս զգեղեցիկ պսակ, թող վկայ լինեն մեր մշակներ, հոտաղներ և մեր լծկան գոմշուկներ ու եզներ»¹⁰։ Նեղինակը խոստովանում է՝ Պապիկ և Թոռնիկ գրքի նյութը «...Վասպուրական երկրի շինական ժողովուրդի ծաղիկներէն քաղած եմ, գոր փնջիկ կապելով և ահա ձերն՝ ձեզ կը նուիրեմ»¹¹։

«Պապիկն առ Թոռնիկ» ուղերձում, Մ. Խրիմյանը գրում է. «...Նայրիկ ոչ միայն վանահայր էր Վարագայ վանքին... այլ առնի դաշտի մշակ էր... ևս Վարագայ վանաց մշակութեան մաճկալ լինելով... շար բան սորվեցայ... այժմ պիտի սկսէ Պապիկ իր դասերն... ախոռին մէջ, դաշտին մէջ... կալսարեղն էլ ինչ հարմար դասարան է... պիտի հողագործութեան բնական և դիւրին դասերը քալ քեզ, որչափ լսած եմ և որչափ փորձառութեամբ սովորած եմ»¹²։

Այդ դասերի ժամանակ նա թվարկում է գութանի, լծի, հնձի, մանգաղի, կալսարեղի, կամնասայի, քառեշտի, օրանի, ջառջառի, գութանի, մաճի և գյուղական գործիքների այլ մասերի անուններ։ Մ. Խրիմյանն առաջ է քաշում «ծանիր զքեզ» գաղափարը՝ մարմնացույց

6 Անդ, էջ 134-139։

7 Տե՛ս **Խրիմյան Նայրիկ**, Երկեր։

8 Անդ, էջ 4-5։ Գիրքն ընդգրկում է «Պապիկ և Թոռնիկ», «Դրախտի ընթանիք», «Միրակ և Սամվել», «Վանգույժ» և «Նայգույժ» մեծաթեք երկերը, որոնք հայ ազգագրության ամենաարարքեր հիմնահարցերի վերաբերյալ ունեն աղբյուրագիտական անփոխարինելի արժեք։

9 Անդ, էջ 20-21։

10 Անդ, էջ 23-24։

11 Անդ, էջ 24։

12 Անդ, էջ 28-29։

անելով այն աղբյուրները, որոնցից բաղել է իր աշխատանքի արագձը՝ դաշտային ազգագրական նյութերը. «Ես հիսուն տարի է որ լսելով, փնտրելով ու փորձառությամբ կը սորվիմ», «աշխարհի մարդիկներ ինձ համար դպրոց են, ես ես դեռ կը սորվիմ այս ծերության ժամանակ», «ինչպէս լսած եմ մեր գիտի հին ծերունեաց պատմութենէն»¹³, «դեռ մանուկ էի, աստի իբր 50 տարի յառաջ կը պարմէր հայրս», «պարմեմ իբրեւ վկայ եւ ապացոյց ասացածիս ինչ որ մի դիպող եւ բարեսիրտ փրկին պարմեց», «մարդիկ կը պարմեն ու կը վկայեն»¹⁴, «գոր կպարմեն մեր մամերը»¹⁵:

Յանկացած ազգագրագետ դաշտային նյութեր գրառելիս կերպեր ունենալ նման բազմազան աղբյուրներ, որոնց բնորոշը արժանահավատությունն է: Այդ նյութերի գրառման, մշակման ու գիտական շրջանառության մեջ դնելու Մ. Խրիմյանի ինքնափորձը ոճն ու լեզուն թույլ են տալիս նրան բնութագրել որպէս բանահավք ու բանասաց: Միաժամանակ, այդ աղբյուրներից բաղված նյութերն ընկած են նրա անգուցական դասերի ավանդման հիմքում¹⁶, որպէս կենցաղի, ճանաչողության, փորձի, ժողովրդական հմտությունների ընդհանրացում, որի պարզառով դրանք ընթերցվում են չթուլացող հեղափոխությամբ՝ ընթերցողի վրա թողնելով անջնջելի փափաքություն ու ներգործություն:

Ն. Օշականի բնորոշմամբ՝ «Պապիկ եւ Թոնիկը հողին պարմությունն է, կյանքը», իսկ Նովի. Ավագյանը Մ. Խրիմյանին համեմատելով Ղ.Ալիշանի հետ, գրում է. «Եթե Ալիշանի մեջ երևակայությունն է, որ թո՛ւք կառնե, Նայրիկի մեջ ալ բուն իսկ իրականությունն է որ ցցյալ գույներով ի հայտ կուգա»: Ալիշանը եւ Խրիմյանը նկարագրողներ էին. «...մեկը ծովափից, իսկ երկրորդը՝ նավի կամրջակի վրայից»¹⁷:

Իր երկերում Մ.Խրիմյանը համառոտ անդրադարձել է երկրագործության շարացան ու շաղացան համակարգերին, վար ու ցանքին, ոռոգմանն ու պարարտացմանը, բերքահավաքին, կախոցին, ամբարմանը, երկրագործական պաշտամունքին: Դանգ առնենք այդ փուլերին առանձին-առանձին:

Վար ու ցանք /«վարուցան»/: Մ.Խրիմյանը իրավացիորեն գտնում է, որ «...մեր գիւղական ժողովրդի հողագործության վիճակը նոյն հնության խանձարոքին մէջ է... մեր բանեցուցած գործիքներ անփաշ, անարուեստ, եւ կոպիտ շինուածներ են, որ չէ թէ միայն գմեղ կը փանջեն, այլ առաւել մեր խեղճ անխոստն անասուններ»¹⁸: Նա քննարկում է, թե երկրագործության մեջ «...ո՞րն է աւելի յարմարագոյն, ե՞զ, գոմէ՞շ, թէ ձիւն» եւ հանգում այն հետևության, որ մենք սովորաբար եզ ու գոմէշ ենք օգտագործում, սակայն փորձը ցույց է տալիս, որ եզն ավելի ձեռնարկ է, քան գոմէշը: Գոմէշները մեծ ծախս ու խնամք են պահանջում, «փափուկ են ու մեծ դարման կուգեն»¹⁹, գործիքի ծանր լինելու պարզառով է որ գյուղացիները գոմէշ են օգտագործում: Եթե գործիքները թեթեւաւոր, գոմէշ լծելու կարիք չի լինի: Մինչդեռ, եզի խնամքը հեշտ է, «...ոչ լուսնալ կուգէ եւ ոչ օձել. բաւական է միայն **քերոցով իր**

13 Անդ, էջ 53, 146:

14 Մ. Խրիմյան, Դրախտի ընթանիք, էջ 209, 258, 265:

15 Մ. Խրիմյան, Միրաք եւ Սամվել, էջ 328:

16 Մ. Խրիմյանը դրանք բնութագրում է որպէս «Փայախօս դասեր» (Միրաք եւ Սամվել), էջ 308), «Բարի հոր կրթական դասեր» (անդ, էջ 310), «կեանքի փորձառության դասեր» (անդ, էջ 372):

17 Տե՛ս Ն.Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 125:

18 Մ.Խրիմյան, Երկեր, էջ 43:

19 Անդ, էջ 46-47:

կոնակ քերել եւ մաքուր պահել»²⁰ (ընդգծումը՝ **Ա.Պ.**): Սակայն, եզից ու գոմեշից ավելի, ձեռնարկ է երկրագործության մեջ ձիու օգտագործումը: Ձիու «...կուրծքը կրկնապարիկ ոյժ ունի քան եզան վիզը... ձին շար արագութիւն ունի»²¹:

Մ. Խրիմյանը վկայում է, որ Վանի ժողովուրդը «...երկու կերպով գեղին կը վարէ. եթէ գեղին կորդ է, գութանով կը վարէ, իսկ եթէ գեղին անցեալ փարի վարումը լինելով փխրած է հողը, էն ժամանակ հարորով կը վարէ մի գոյգ գոմէշ կամ եզն լծելով»²²: Ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին սկսում են գութանով վարը. «...առաջին նուագին կաթնավար կասեն, երբ հողը կակուղ է եւ դիրավար», այն հետո պնդանում է եւ վարելիս մեծ-մեծ կոշտեր են ստացվում: Այդ պարճառով, գյուղացին շրապում է գութան լծել, որ «կաթնավարի ժամանակը չանցնի»²³: Արձկն եւ Արեւ զավառներում հողը վարելու եղանակը փոքրեր է եւ արդյունավետ, որին «դիր» են ասում, նրանք երկու անգամ վարում են հողը. գարնան սկզբում՝ արորով, մնում է մինչեւ աշնան սկիզբը: Հետո վարում են մի քանակ արորով, որի խովի երկու կողքերին խոված են երկու փայտակներ, մի թիգ լայնությամբ: Տախտակների արանքում թողնված է փոքր ճեղք, սերմնացանը սերմը գցում է փայտակների մեջ, որոնք շարքով ընկնում են ակոսում եւ ծածկվում հողով: Հարկիները ծում են շարքով, «...մինչեւ մէկին քսան ու քսան հինգ» բերք են փայխ, սերմի կորուստ չի լինում²⁴:

Շաղացանի ժամանակ, գրում է Մ.Խրիմյանը, -Մուշի, Ալաշկերտի եւ Արարատյան գութաններին չնայած լծում են ինը գոյգ գոմէշ ու եզներ, սակայն «հազի կը բանեցնեն այդ կոպիտ գութան», որի բացած ակոսը շար մեծ փայտեղանքներով չունի Վանայ գութանի բացած ակոսից: Գլուխ մի քանի փներ միանալով, հազիվ են կարողանում մի գութան գնել²⁵: Վանա գութանները դրանց նկատմամբ ավելի կարարեղանքով են, քանի որ մեր հյուսիսները այդ արհեստի մեջ վարպետ են եւ «լարաչափով... ուղղություն կտան գութանին» (ընդգ-

20 Անդ, էջ 48: Այդ գործողությունը հայտնի է **թիմարել** անունով («քերել/ խոզանակ») ձիու մաշկը մաքրել» (տե՛ս Մր. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 107), որը գրավոր աղբյուրներում սակավ է հանդիպում: Ըստ դաշտային նյութերի, քերոցն ուներ ուղղանկյան կամ քառանկյան փեսք, մի քանի շարք արամնաշարեր, կաշվե փուկ, որի մեջ անասուն խնամողը մրցնում էր ձեռքը եւ թիմարում: Առանձին վայրերում այն հայտնի է **դաշավել** անունով. տե՛ս Ա.Պետրոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, տպւր 3, Եր., 1984:

21 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 48:

22 Անդ, էջ 49: Գեղինը **կորդ** թողնելը (խոպան, անմշակ, անվար). տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Եր., 1974, էջ 195), նպատակն էր հողի բերքաբաշխությանը: Արեւմտահայության մեջ ընդունված **կորդ** բառի փոխարեն, արեւելահայերն օգտագործում են **խոպան** թողնել /պարսպ, անմշակ, թողած արտ բառակապակցություն. տե՛ս Մր. Մալխասյան, նշվ. աշխ., էջ 278:

23 Տղի փափուկ ժամանակ արվող «կաթնավարի» հերկոցը կարճ էր տևում, քանի որ հողը ամրանում էր եւ դժվարացնում վարելը: Խարբերդում, մինչև վարելը հողը ջրում են, որի շնորհիվ, վարելիս կոշտեր չեն առաջանում. տե՛ս Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 49:

24 Անդ, էջ 49: Գեղինը փայխ է Վասպուրականին բնորոշ շարացան համակարգի համառոտ նկարագրությունը, որը հայտնի է **փիր** կամ **դիր** դնել անունով: Այն շաղացան համակարգից փոքրերով է ոչ միայն վարելու ու ցանելու աշխատանքայնությունով, այլև երկրագործական տեխնիկայի տեխնիկա-տեխնոլոգիական եւ կառուցվածքայինական տեսանկյուններով: Հարագայում, Վ. Բոդյանը հենվելով Մ. Խրիմյանի եւ այլոց վկայությունների, եւ հատկապես իր կողմից գրանցված դաշտային նյութերի վրա, վեր հանեց շարացան համակարգը՝ Վանա լճի ավազանում. տե՛ս Վ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 251-266:

25 Մ. Խրիմյանը նկատի ունի երկրագործության մեջ լայն փարածում ունեցած համագործակցությունը, որը հայտնի է **հարակաշ** անունով («կիսովի ընկեր, կիսարար, բաժնեկից», տե՛ս Տր. Աճառյան, Հայերեն արժանական բառարան, հ. 3, Եր., 1971, էջ 56): Հարակաշի կազմակերպման ձևերի, անդամների իրավունքների, պարտականությունների, մատակարարի վարի եւ այլ մանրամասները տե՛ս Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 304-310:

ծումը՝ Ա.Պ.)²⁶: Եթե մեր գութանը համեմատենք երոպական գութանի հետ, կրեանենք, որ նրանք լծում են մի գույգ գոմեշ կամ երկու գույգ եգ, այնինչ «...մեր գութան պետք է չորս լծով բանեցնեն»: Մեր «...Աղամայ գութան... հասար կորաքամակ հացի փայր է», որին վանեցի գյուղացիները «էշ կասեն», դրա առապամին «անցուցած են երկաթե խովր»։ Վանա գութանին լծում են երկու գոմեշ և երեք գույգ եգ, որի բացած ակոսը հագիվ մի թզաչափ խորություն ունի²⁷:

Մ. Խրիմյանը վկայում է, որ վանեցի վարպետ Դավիթը սովորել է երոպական գութան պարբապել և «...Վանայ շրջակայ գիւղացիք սկսած են այդ գութանը գործածել», որը բավական էժան է²⁸:

Մ. Խրիմյանը նկարագրում է ցանովի արքերը ջրելու ու փոցխելու աշխատանքները: Ջրելու նպատակով, արքերում «կորի» են բաշում²⁹, իսկ ցանելուց հետո, մշակը «կը մանկեմէ»: Մանկելու վրա շարված են փաս և ավելի մարներ, այն «հասար թեղի կարծր և ծանր փայր է, որոյ վերայ կը կենայ մշակ, չուանի մի ծայրը կը բռնէ, որոյ միւս ծայր կապուած է լուծին: ...մշակական աշխատութեան մէջ ամենէն սոսկալի դժուարութիւն մանկեմն է...»³⁰:

Խարբերում, Կարինում, Բասենում ժողովուրդը ուժ ու միջոց չի խնայում մի անգամ վարած արքը 2-4 անգամ «հարորավար անելով հողը շուռ փայլ»-գրում է Մ. Խրիմյանը: Մինչդեռ, վանեցիները մի անգամ են արքը վարում և չեն հերքում այլ վայրերի գյուղացիների օրինակին: Հողը չեն պարարտացնում, բավարարվում են եղած արքերի մի մասը ամեն փարի «կորդ» թողնելով³¹:

Ուշագրավ են Մ. Խրիմյանի այն դասերը, որոնք վերաբերում են սերմի ընտրությանը և սերմնացանին: Վաղ ժամանակներում գյուղացին սերմը փանում էր քահանայի մոտ, օրինել փայլիս և նոր ցանում: Սերմը մաղելով՝ մաքրում էր ավերորդություններից, առանձնացնում «վրիպ և ցամաքած» հարիկները: Նայրնի է, որ արքերը պարարտացնելով կամ «կորդ մնալով ուժովացված են լինում»: «...մեր սերմնահան մշակներու ձեռք բաւական քաջավարժ է»: Սերմ ցանելու համար, սերմնացանի «...ձեռքի բուռը իւր համեմատական չափն է. երբ ուզէ թանձր ցանել բուռը լի կանէ, և երբ նոսր՝ բուռը կծկելով կ'ամփոփէ»³²:

Մ. Խրիմյանի վկայությամբ, երբ ցանքը սկսվում էր, սերմնացանը «...փուն չէր դառնար դաշտին», բնում էր բացած ակոսի մեջ, բաց երկնքի փակ, մինչև ավարտվեր սերմի ցանելու ժամանակը: Ցանքը սկսելու համար նա «...գութին պինդ կկապէր բուռն մի սերմէն առնելով

26 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 44: Այնուհայր է, որ Մ. Խրիմյանը քաջարեղյակ էր վեցկի կամ արոր «կապելու» գործողությանը, որը խարսխված է ժողովրդական փորձի ու հմտության վրա: Աներաժեշտ գործիքների բացակայության պարագայում, վարող փելսնիկայի հավարումը կատարվում էր լարաչափի կամ թելաչափի միջոցով (մանրամասն փնս՝ Վ.Բդոյան, նշվ. աշխ., էջ 224-225):

27 Տե՛ս Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 44: Ըստ Վ. Բդոյանի «Գութանի համառը Բարձր Նայրնի խմբի գրքն բոլոր գավառներում էլ անունն է կրում: Էշը ուղփի պարանոցի ձև ունի» (փնս՝ Վ.Բդոյան, նշվ. աշխ., էջ 159):

28 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 44:

29 Անդ, էջ 51: Կորի-ջրելու համար արքերում և բանջարանոցներում բացված առու, փնս՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացարձակ բառարան», հ. 3, էջ 196:

30 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 51: Ըստ Վ. Բդոյանի մանկեմը հայրնի է փոցխ, մանգեմ անուններով: «Լինելով առաջին վարող գործիքը՝ այն համարվում է առաջին հարթիչներից մեկը». փնս՝ Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 266:

31 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 53-54:

32 Անդ, էջ 57:

շապկի սրբաբացեալ կը ցանէր ծոցին երկու կողմը մինչեւ անթաքակեր. յեպոյ երես խաշակնքելով կսկսէր ցանել արարը: Յանքը քննում էր 20-30 օր, «...մինչեւ կը ծլէին ցանուորի ծոցի հարիկներ»: Դա «...մի բարեգուշակ նշան կը համարուէր ցանուած արարերուն պարզաբերութեան...»³³:

Մ. Խրիմյանը գրի է առել ցանքի ժամանակ արվող աղոթքների մի շարք, որից բերենք մեկը.

Ես կը ցանեմ, ո՛վ իմ Աստուած,
Դու անձրեւ քուր առաք առաք,
Չոր հարիկներ ծղլին հողէն,
Դճնին արարես կանաչ-կանաչ...³⁴

Ցանում են գարնանացան եւ աշնանացան (սպրիլ-սեպտեմբեր), սակայն եղանակը հաճախ խանգարում է, եւ գարնանացանը՝ ձախողվում: Ուարի, գյուղացիները մեծ հույսեր չեն կապում գարնանացանի հետ, հիմնականում ցանում են աշնանացան (օգոստոսի կեսերից-հոկտեմբեր, նպարակահարմար է սկսել սեպտեմբերին): Գարնանացանից եւ աշնանացանից գար,- գրում է Մ. Խրիմյանը,- կա մի համակարգ եւս. աշնան վերջին, երբ գետինը մոպենում է սառչելու աստիճանի, ցանում են: Մերմը մնալով հողի մեջ, ոչ ծլում է, ոչ բուսնում: Գարնան գալուն պես, դրանք ծլում են գարնանացանից առաջ, քանի որ հողի մեջ փափկում են: Մինչդեռ միշտ չէ, որ գարնանացանը, եղանակի պարզառով, հնարավոր է լինում իրականացնել³⁵: Մ. Խրիմյանը գրում է, որ արեւադարձի ժամանակ խիստ անհրաժեշտ է երկրագործության համար, քանի որ անձրևների ուշանալը կարող է վնասել բերքը: Ռոտգման համար պետք է «...հարմար կորիներ բաշել, շրջադարձի թումբեր կապել»: Կարևոր է վարելահողի դիրքը, քանի որ գառիթափ եւ անհարթ արարերի ռոտգմանը պահանջում է լրացուցիչ աշխատանք: Նկարագրում է գետերից լճակներ պարարաստելու եւ դրանցով արարերը ջրելու անհրաժեշտության մասին: Նախումբ այն հետեւության, թե կոխվեցին ու վեճերը, որոնք կապված են արարերը ջրելու հետ, երբ հաճախ «...արին ջուրին հետ կխառնվի», խսպառ կվերանա³⁶: Խոսում է արարերի մեջ թմբեր եւ մարգեր անելու, հողը հարթեցնելու եղանակների մասին: Արարերից բարեր հավաքելը (բարհավաք), բաղհանը, համարելով առաք բերք սրանալու կարևոր պայման: Նոյին ուժ քալու երկու միջոց կա,- գրում է Մ. Խրիմյանը,- մեկը՝ մի քանի քարով հողը չմշակելն է, որպեսզի արարը հանգստանա, մյուսը՝ արարին գոմաղը, փռի քալու է, կամ «սերմը փռիսը»: Այսինքն, եթե ցորեն է ցանել, մյուս քարի պետք է խոր ցանեն փռիսը ցանովի բույսերը: Այդ ամենի շնորհիվ «ծերացած հողը երիտասարդ կդառնայ»³⁷:

Բերքահավաք («հունձք»): Այս փուլի դասերը նույնպես հենված են կյանքի փորձի

33 Անդ, էջ 58:

34 Անդ:

35 Անդ: Այս համակարգի վերաբերյալ, այլ աղբյուրներում որևէ վկայություն չկա: Մի՞գուցե այն բնորոշ է եղել միայն Վասպուրականին:

36 Անդ, էջ 62:

37 Տե՛ս անդ, էջ 71:

և ժողովրդական դարավոր հմտության վրա: Այսպես, ցորենի արտը հնձելու ժամանակը որոշելու համար Մ. Խրիմյանը սովորեցնում է հերեյալ ուշագրավ եղանակը. երբ գյուղացին դաշտ գնալով տեսնում է, որ ցորենի արտերը «...շիկակաբմիր գույներով կը ծածանին մեղմաշունչ հովերէն... հնձելու ժամանակ հասած է»³⁸: Նույն կար «մի բարի սովորոյթ» ում արտը շուր էր հաստնանում, հարեւանները և բարեկամները գալիս էին նրա արտը քաղելուն օգնում, որը փոխադարձ էր:

Մ. Խրիմյանը վկայում է, որ ցորենի արտերը հնձում են մանգաղով, երբ բույսը ցանցառ է ու կարճ, ինչպես նաև գերանդիով, երբ ցողունները բարձրահասակ են և խորախառն: Բացառություն է կազմում Մուշը, որտեղ հոտաղները «...չգիտեն մանգաղ, ամենայն ինչ գերնի երեսէն բուսածները գերանդիով կը սրբեն», ոչինչ որ հատիկները գերին կթափվեն: Մուշն այնպիսի դաշտեր ունի, որ հողի մեջ ընկած հատիկները աշնան արևի շնորհիվ կծկն և «...հնձած արտերը նորէն կանաչապար է»³⁹:

Կալսոց («կալ և կալարեղ»): Չնայած համառոր, տակայն Մ. Խրիմյանը րովել է այս փուլի նկարագիրը: Մինչև հունձը, - գրում է նա, - գյուղացին պէտք է կալարեղի համար պարարաստություն տեսնի, կալսելու գործիքները կարգի բերի: Վանի արևելյան և հյուսիսային հատվածներում, գյուղացին կալարեղ պարարաստելու անհրաժեշտություն չունի, քանի որ «...գիւղերուն մօտ խիւր և մանրաբոյս մարգեր կան, որ գերնին երես ծածկած են իբրեւ մի կանաչագարդ փոռց, ինչպէս մեր Արճակ գիւղին կալարեղեր, որք բնական են և պէտք չունին պարարաստութեան»⁴⁰: Այդ պարագայով բերքը մաքուր է, առանց քարի ու հողի: Այն վայրերում, որտեղ խորածածկ չկա, երկրագործը պէտք է ամեն փարի կալ պարարաստի: Նախ՝ փորում է կալի փղը, ջրում և գերնի մակերեսը հարթեցնում բաժով: Ջուրը ցամաքեւոց հետո, մակերեսին հարդ են շաղ փաղիս և բահի հակառակ երեսով հարթեցնում: Սակայն, այս եղանակով պարարաստված կալը լիովին չի հարթեցվում և կալսելիս բերքը գերծ չէ ավազից ու հողից⁴¹: Կալսելու համար հարմար է **ջառջառ** գործիքը, որը «...փայտէ մի գլանակ է երկու կանգուն երկար, որոյ վերայ շարուած են ոլոր ձևով երկաթէ սուր ուրագներ, որ անուանն դառնալով կը կտրտի: Կալի օրանն: Մանաւանդ, երբ ձիւր լծուած լինին **ջառ-ջառին** (ընդգծումը՝ **Ա.Պ.**) արագապէս դառնալով կամնասայլէն շար ատելի գործ կը տեսնեն»⁴²: Մ. Խրիմյանը նկարագրում է նաև երոպական երկրներում կիրառվող քամահար մեքենաները և դրանց առավելությունները: Ուշագրավ են հնձած բերքը պահելու վերաբերյալ նրա դասերը: Փորձած է, որ «...ցորեն ատելի լաւ կը պահուի երկար ժամանակ դեզերուն մէջ

38 Անդ էջ 73:

39 Անդ, էջ 75:

40 Անդ, էջ 77:

41 Տե՛ս անդ:

42 Այս հակիրճ շարադրանքում Մ. Խրիմյանը րովել է ոչ միայն ջառջառի նկարագրությունը, այլև բացառել աշխատեցնելու սկզբունքներն ու կամի նկարմամբ ունեցած առավելությունները (անդ): Կալսելու նախնական ձևերից մինչև կամ ու կամնասայլ կիրառված եղանակները մանրամասն նկարագրել է Վ. Բոդյանը: Նախնական կամի, կամնասայլը կալում էր **ուրագի** կամ **ալում** կոչված երկաթե կտրիչների միջոցով: Գործիքի ջառջառ-ճառճառ անունը ծագում է ճոճուլ բառից, քանի որ կամնասայլն աշխատելիս, ճոճում է: Արեւմտահայության մեջ պահպանված էր ճիշդ՝ **ճառճառ** անունը, իսկ արեւելահայության մեջ՝ **ջառջառ** աղավաղված ձևը (տե՛ս Վ. Բոդյան, Նշվ. աշխ., էջ 406): Նկատելով, որ Մ. Խրիմյանը օգտագործել է ոչ թե ճառճառ, այլ ջառջառ տերմինը:

իրանց հասկերով ու պարեաններով, քան թե շարմարանին մեջ, որ շար անգամ կը փաթանայ, կոջուրի եթե երբեմն խառնելով չի դարձնես»⁴³:

Ամբարում («շարմարան»): Անդրադառնալով երկրագործության ավարտական փուլին՝ Մ. Խրիմյանը գրել է. Վարագա Խաչի փոնին, նախկին սովորույթով «...բոլոր Վասպուրական աշխարհ... հարիսայ կը դնէ... ցնծութեան օր է, մեր այս ատոր **կալի կորկոպ** (ընդգծումը՝ Մ.Խ.) կասենք, վասն զի կալեր կը վերջանան»: Կար ժամանակ, որ հարուստները «...մէկ մէկ եզ կը մորթէին հարիսայի համար, իրենց մեռելները յիշելով հոգոյ հաց կը պարբաստէին»⁴⁴: Հարիսա եփելու վերաբերյալ Մ. Խրիմյանը գրառել է ուշագրավ երգաշար, որից բերենք մի փոքր հարված.

Էս օր, գիտէ՞ք թե ի՞նչ օր է,
Մեր Վարագայ Խաչի փօնն է.
Եւ մենք կասենք կալի կորկոպ,
Հարիսայի մեծ փօնն է:
Բոլոր աշխարհ Վասպուրական
Հերիսայի փօն կապարէ...⁴⁵

Հարիսայի անվան ծագման վերաբերյալ հեղինակը բերում է մի ավանդազրույց, ասելով՝ «Ես էլ իմ պապիկէս լսած եմ»: Այդ զրույցի համաձայն, երբ Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապից եկավ Վաղարշապատ, սկսեց իր քարոզները: Նա բերեց փվեց «շար եզ ու ոչ-խար», մորթեցին, լցրին մեծ կաթսաների մեջ ևս դրին կրակին: Մսի վրա լցրին «կորկոպ», և Գրիգոր Լուսավորիչը երիտասարդներին հրամայեց «**հարէք ըստ**», որից էլ այս «կերակուրի անուն մնաց **հարիսա**: Այս կերակուր հայկական մի պարտական կերակուր է» (ընդգծումը՝ Ա.Պ.)⁴⁶:

Շարմարանի պարբաստումը,- գրում է Մ. Խրիմյանը,- գյուղացու համար «պարզ ու նախնական է»: Սովորաբար, գյուղացիներն իրենց ցորեն, գարին «...կը հորեն ի գեւրին», կողբերը խոր կամ հարդ լցնելով, որը վնասում է բերքին: Ուրիշները «...հողէ մեծ մեծ փեթակներ կը շինեն» ցորենը պահելու համար, սակայն ամենից հարմարը շարմարան պարբաստելն է⁴⁷:

Տնտեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի դասերը միայն երկրագործությանը չեն վերաբերում: Ուշագրավ է անասունների խնամքի, սպասված եկամուտների, շների միջոցով հոբերը հսկելու, ծառերի մշակման, փայտի փայրերը պեսակներն արհեստագործության մեջ օգտագործելու, շերամապահության, մեղրաբուսի սպասման վերաբերյալ համառոր

43 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 79: Այս մասին որեւէ այլ հիշատակություն հայտնի չէ:

44 Անդ, էջ 80: **Կալի կորկոպ**-ծեծած եւ թեփը հանած ցորեն կամ գարի: Ձավարով եւ մտով կնճռի մեջ եփած թանձր կերակուր, հերիսայի մի տեսակը. փն «Ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան», հ. 3, էջ 197/:

45 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 80: Կորկոպի փոնը վասպուրականցու սիրելի փոներից է:

46 Անդ, էջ 81:

47 Անդ, էջ 82:

ակնարկները, որոնք արժանի են ուշադրության: Ծառերի մշակման համար «...մի սղոց եւ կոռ դանակ առնելով», պէտք է կտրել չորացած ճյուղերը, փորել պտղաբույսի ծառերի բնկերը: Բնակարանի ծածկի համար անհրաժեշտ է բարդի, կաղամախի, ուռնի, իսկ «Նացի փայտ պէտք է գութանի կոռ էշին եւ առաքամի համար, թեղի փայտ պէտք է սայլերու մածան»⁴⁸ կազմելու եւ **սոնակի** համար»⁴⁹ (ընդգծումները՝ Մ.Խ.):

Ըստ Մ. Խրիմյանի, շերամապահության զարգացման համար անհրաժեշտ է փնկել թթնու ծառեր. «...թթնի մշակության բուն արդիւնք **խոզակն է**, կամ պէտք է ժամանակին **խոզակ** ծախել եւ կամ խոզակներէն թել քաշելով **սպրշում** ծախել»: Իսկ «...երբ կսկսին որդեր խոզաններ հիսել», պէտք է «փոքրիկ-փոքրիկ **ծառի ճղիկներ պարաստել...**»⁵⁰ (ընդգծումները՝ Ա.Ղ.):

Ուշագրավ եւ եզակի է երկրագործ-մշակների՝ դաշտում ճաշելու վերաբերյալ Մ.Խրիմյանի հետադարձը. «Մշակին սեղան կանաչագարդ գեղինն է, ուր կը փռնէ **մէզար**, կը շարեն վրան թագէ հացեր, կը բանան մածնի փոսիկ, հողէ կամ փայտէ **կոսին** մէջը կը հարին գմածուն աղբիւրի պաղուկ ջրով, յետոյ կառնեն գդալներ...»⁵¹ (ընդգծումները՝ Մ.Խ.):

Այսպիսով, Մ. Խրիմյանի գրառումները հայոց փոքրահասակ կենցաղի վերաբերյալ ընդգրկում են երկրագործական մշակույթի չորս հիմնական փուլերը՝ «վարուցան», «հունձք», «կալ ու կալարել», «շրմարան»: Ընդհանուր գծերով նա անդրադարձել է սերմի ընթացքին, ցանկում, վարելու եղանակներին, «կաթնավարին», «դիր» դնելուն, արտի մի մասը «կորդ» թողնելուն, «կորի» քաշելուն, հողը «մանկեռնուն» եւ այլն: Ներկայացրել է երկրագործական վարող տեխնիկայի (արոր, նախագործության, գութան), բերքահավաքի (մանգաղ, գերանդի, փոցի, կաղաման) (կալ կամ կամուսայ) եւ ամբարման (հորեր, կավե, փայտե ամաններ), փուլերի տեխնիկա-տեխնոլոգիական, ընկերային-ծխական տեսանկ-

48 Անդ, էջ 106: Թեղի ծառի փայտից սայլի մածան շինելու մասին Մ. Խրիմյանի վկայությունը եզակի է, իսկ բառարաններում **մածան** բառի վերաբերյալ եղած մեկնությունները սայլի հետ ոչ մի աղերս չունեն: Մածանն այն երկու ամուր հեծաններն են, որոնք ձգվում են սայլի թափի կողքերից, որի ծայրերը կապում են դնում էին լծի մեջքերը: Սայլի ներքին եւ վերին հեծանները իրար ամրացվում էին ճաղերի միջոցով՝ սրելով ճաղաշարք, իսկ թարփի հարակից փռում էին փախարակներ. տե՛ս «Народы Кавказа, Армяне», т. II, М., 1962, էջ 488: Նայոց վարող տեխնիկայում **մասանը** հայտնի է որպես համնոցի «կցորդ», «վեակու շարժական մաս», տե՛ս Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 223:

49 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 106: **Սոնակը** (սոնի) պարաստվում էին թեղի ամուր փայտից, որպեսզի ուշ մաշվեր: «Սոնու երկու ծայրերին ամրացվում էին սայլի կամ կառքի անիվները» (տե՛ս Սր. Մախոսյանց, նշվ. աշխ., հ. 4, Եր., 1945, էջ 259): Ավելի վաղ, երկանիվ սայլի անիվները պարաստվում էին հասար փախարակներից՝ սկավառակաձեւ, եւ ամրացնում սոնիին, որը պարվելով՝ պտտեցնում էր անիվները: Այն հայտնի է «կույր սեղ» կամ «մարան» սեղ անունով: Ի դարի սկզբին, Արեւելյան Նայաստանում սայլի անիվները դառնում են ճաղավոր, որոնք պարվում են անշարժ տնիկի շուրջը (տե՛ս «Народы Кавказа», էջ 480): Բնակարանի ծածկի, վարող տեխնիկայի, փոխադրամիջոցների, փայտե ծառափայտների փայտը արհեստագործության մեջ օգտագործվելու մասին Մ. Խրիմյանի վկայությունները հենվում է ժողովրդական դարավոր փորձի վրա:

50 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 109: Այս փոքրիկ հատվածում Մ. Խրիմյանը համառոր նկարագրել է շերամապահության հիմնական փուլերն ու աշխատանքային գործը: **Խոզակ** (շերամի բոժոժ) բառն առավել փարածված էր արեւմտահայության մեջ, իսկ Արեւելյան Նայաստանում՝ **բոժոժ**: **Ապրեշումը** մերաքան է, սպրեշում բառը հայերենին է անցել Պարսկաստանից: **Փոքր ծառերի ճղիկներ** ասելով Մ. Խրիմյանը նկատի ունի բոժոժավելների պարաստելն ու հարկերի վրա տեղադրելը: Պեքը է ժամանակին դրվելին բոժոժավելները, որպեսզի որդերը բոժոժ հյուսելին դրանց վրա. տե՛ս Ա. Պերրոսյան, Շերամապահական մշակույթը Նայաստանում, Եր., 1987:

51 Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 108:

յունները, ժողովրդական փորձն ու հմտությունները: Միայն «մաճկալ», բանասաց, բանահավաք ու բանիմաց ազգագրագետը կարող էր մտնել երկրագործական մշակույթի ծալքերը՝ ապագա սերունդներին կրակելով հազարամյակների պատմություն ունեցող զբաղմունքի համառոտ շարադրանքը:

Ուշագրավ են Մ. Խրիմյանի գրառումներն անասունների խնամքի, քաշող ուժի, արհեստագործության, փոխադրամիջոցների տեսակների, շերամապահության, մեղաքսի սպացման մասին: Նկատելի է, որ ԺԹ- դարի երկրորդ կեսին, այս ոլորտները դեռևս լիովին չէին ընդգրկվել մինչև իսկ ազգագրական ուսումնասիրությունների շրջանակներում: Ահա ինչու փնտրեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի գրառումներն ունեն ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրի արժեք: